# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
էլ. Փոստ vayktown@mail.ru

*05 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  N 63-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՍԵՆ ՎԱԼԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի և հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Ս. Ստեփանյանի կողմից 30.09.2020 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի ուղղված վկայագրերը և Վայք համայնքի բնակիչ Արսեն Վալիկի Ոսկանյանի դիմումները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Արսեն Վալիկի Ոսկանյանին /ծնված 14.11.1966թ./ սեփականության իրավունքը ք.Վայք Իսրայել Օրու փողոց, թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով և այն սպասարկող 0.080հա մակերեսով հողամասի նկատմամբ /ծածկագիր՝10-003-0002-0081/
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 00,00 քմ, կառուցվել են 1900-1900 թվականներին, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-դ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, միաժամանակ՝ փաստացի ավել չափագրված հողամասը ընտանիքին սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափի գերազանցում չի արձանագրում:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 08917547 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*05 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 64-Ա

## ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 11.03.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 956-Ն որոշմամբ և հաշվի առնելով պատվիրատուի դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1.ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը  Վայք համայնքի ղեկավարի կողմից 2021թ.մարտի  11-ին տրված թիվ 02 շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023թ-ի դեկտեմբերի 31-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
էլ. Փոստ vayktown@mail.ru

*10 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 65-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 18-ի «Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող ծածկագիր՝ 10-003-004-066-001 հասարակական տարածքը վերահասցեավորելու վերաբերյալ» թիվ 157-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1 Որոշման բովանդակության մեջ 1-ին կետում «Ջերմուկի խճուղի 16շենք,  8 տարածք» բառերը փոխարինել «Ջերմուկի խճուղի 16շենք,  8/1 խանութ » բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*11 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 66-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԼԵՎՈՆ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի բնակիչ Լևոն Սամվելի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող Հերհեր բնակավայրի 22-րդ փողոց 14/1 հասցեում գտնվող 0.1233 հա մակերեսով, 10-028-0043-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝ միաժամանակ սահմանելով դրանց համապատասխան գործառնական նշանակությունները՝

- Վայք համայնք, գյուղ Հերհեր, 22-րդ փողոց 14/1, մակերեսը՝ 0.008089 հա,

- Վայք համայնք, գյուղ Հերհեր, 22-րդ փողոց 14/2, մակերեսը՝ 0,1151 հա

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*11 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 67-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին » ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի «ե» ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.04.2003թ. «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին » թիվ 384 -Ն որոշումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ստեղծել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ հիմնված հետևյալ բազաների վրա և նշանակել պետեր՝

- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական սպասարկումների ծառայություն՝ ՝հիմնված «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ -ի բազայի վրա և պետ նշանակել տնօրեն Վարդան Ավետյանին ։
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի ,սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն հիմնված Վայքի համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ Արամ Հովսեփյանին ։
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության բնության և շրջակա միջավայրի պաշտպանության ծառայություն հիմնված «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ի բազայի վրա ,պետ նշանակել Թաթուլ Վարդանյանին ։
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայություն հիմնված «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ -ի բազայի վրա և պետ նշանակել ՇիրակՀունանյանին ։
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայություն հիմնված գերատեսչական բժշկական կազմակերպությունների և հիմնարկների բազայի վրա ,պետ նշանակել Վայքի բժշկական կենտրոնի տնօրեն Ռոբերտ Ալանյանին ։

- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանման ծառայություն հիմնված ՀՀ ոստիկանության Վայքի բաժնի բազայի վրա ,պետ նշանակել ոստիկանության Վայքի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ ոստիկանության փոխգնդապետ Սամվել Գալստյանին :
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության էներգետիկ սպասարկումների ծառայություն՝ հիմնված "ՀԱՅԷԼՑԱՆՑ" ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղ Վայք ցանցի բազայի հիման վրա,պետ նշանակել էլ. ցանց. անվտանգության գծով ինժեներ Արմեն Հարությունյանին:
- Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայություն՝ հիմնված «ԱրմենՏել» ՓԲԸ Եղեգնաձոր,Վայք, Ջերմուկ ցանցերի շահագործման ուղղության ցանցի բազայի վրա, պետ նշանակել Հովսեփ Հովսեփյանին:

2. Հաստատել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները :

3. Հանձնարարել ծառայությունների պետերին 6 ամսյա ժամկետում մշակել ծառայությունների քաղաքացիական պաշտպանության պլանները՝համաձայն « ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի ,, Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին ,, թի6 633 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » ՀՀ կառավարության 26.08.2010թ.-ի թիվ 1187 -Ն որոշման :

4.Սույն որոշունմ ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 68-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,080 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող Հովիկ Հովհաննիսյանին պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0.0018 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 53/35 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 69-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՌՆԻԿ ՎԱՀԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ 54-Ա ՈՐՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 24 մարտի 2023 թվականի թիվ 54-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

- Որոշման 1-ին կետում նշված «Գառնիկ Վահանի Ստեփանյանի » բառերից հետո ավելացնել «ծնված՝ 15.04.1958թ.» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 70-Ա

## ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Ստեփանյանի դիմումը և «Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Ճանաչել Գառնիկ Ստեփանյանի /ծնված 1958թ./ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.02344 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող հողամասի նկատմամբ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

18 ԱՊՐԻԼԻ 2023թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 71-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍԼԱՎԻԿ ՄԱՅԻՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչներ Սլավիկ Մայիսի Մուրադյանի/ծնված՝ 1947թ./,Շուշիկ Վաղարշակի Թովմասյանի/ ծնված՝ 1951թ./, Բելա Սլավիկի Մուրադյանի/ծնված՝ 1973թ/, Մայիս Սլավիկի Մուրադյանի/ծնված՝ 1974թ/, Կարեն Սլավիկի Մուրադյանի /ծնված՝ 1976թ/ և Գևորգ Սլավիկի Մուրադյանի /ծնված՝ 1988թ/ սեփականություն համարվող Վայք համայնք գյուղ Զառիթափ, 7-րդ փողոց, 4 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2000թ.:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.12 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 72-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՐԻԿ ՆՈՐԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ՀՈՂԵՐԸ ՄԵԿ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2887-Ն որոշմամբ, 2387-ն որոշման 35-րդ և 36-րդ կետերով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք քաղաքի բնակիչ Սուրիկ Նորիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող, առանձին միավոր հանդիսացող ք. Վայքում գտնվող 0.0036 հա /ծածկագիր՝ 10-003-006-022/ և 0.0019 հա /ծածկագիր՝ 10-003-007-023/ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը միավորել և ճանաչել մեկ միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված մեկ միավոր հանդիսացող հողատարածքը հասցեավորել՝ որպես Վայք համայնք, ք.Վայք, Ջերմուկի խճուղի փ. 2-րդ նրբանցք, 2 ավտոտեխսպասարկման կետ:

3.Դիմել ՀՀ Կադաստրային կոմիտե սույն որոշման առաջին կետում նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու և Կադաստրային քարտեզում ուղղում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**